

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2015թ. նոյեմբերի 25-ի
նիստի /արձանագրություն N 4/

1. «Կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանի կրթական ոլորտում» թեմայով նոյեմբերի 27-ին «Կոնգրես» հյուրանոցում կայանալիք քննարկմանը մասնակցելու նպատակով ներկայացնել ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Նարինե Սարգսյանի թեկնածությունը:
2. Հանձնարարել պրոռեկտորներ Ն. Սարգսյանին, Հ. Ավագյանին և գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանին շտապ կազմել և ռեկտորների խորհրդի նախագահին տրամադրել փաստաթուղթ՝ բուհերը ավելացված արժեքի հարկման դաշտ բերելու օրինագծի հետ կապված ԵԹԿՊԻ-ի ռիսկերի վերաբերյալ:
3. Ինստիտուտի ուսումնական գործընթացը բարելավելու և շենքի վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով՝
 - 3.1 հանձնարարել թողարկող ամբիոններին ավարտական աշխատանքների պաշտպանությունից 6 ամիս առաջ կազմել և ներկայացնել ավարտական աշխատանքների նախահաշիվը և ժամանակացույցը,
 - 3.2 ս.թ. նոյեմբերի 30-ի, դեկտեմբերի 1-ի և 2-ի երեկոյան ինստիտուտի ղեկավարության կողմից շրջայց կատարել ինստիտուտի շենքում,
 - 3.3 ս.թ. դեկտեմբերի 1-ից ուսանողների մուտքն ինստիտուտ թույլատրել միայն ուսանողական տոմսերով,
 - 3.4 հանձնարարել ուսխորհրդին առաջիկա օրերին կազմակերպել հերթապահություն՝ երեկոյան ժամերին շենքը վերահսկելու և իրավիճակին ծանոթանալու նպատակով:
4. Հանձնարարել ամբիոնների վարիչներին խստիվ հետևել դասախոսների հաճախելիությանը, պարտավորեցնել դասախոսներին հանրապետությունից բացակայելու դեպքում այդ մասին տեղեկացնել գրավոր դիմումով:

5. Հանձնարարել պրոռեկտորներ Ն. Սարգսյանին և Հ. Ավագյանին հետևել աուդիտի կողմից նշված դիտողությունների կատարման ընթացքին և ապահովել կատարման ժամկետները:
6. 70-ամյա հորեյանի կապակցությամբ ինստիտուտի պատվավոր շրջանավարտ ՀՀ կինոմոտոգրաֆիստների միության նախագահ Ռուբեն Գևորգյանցին պարգևատրել ինստիտուտի հուշամեդալով և սույն որոշումը ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը,
- 6.1 հանձնարարել գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանին ինստիտուտի կողմից պատրաստված ինստիտուտի հուշամեդալները մուտքագրել:
7. Հանձնարարել իրավախորհրդատու Է. Մանասերյանին մինչև ս.թ. դեկտեմբերի 10-ը կազմել ինստիտուտի կանոնադրությունում առաջարկվող փոփոխությունների նախագիծը և ներկայացնել ինստիտուտի մեթոդ խորհրդի քննարկմանը:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան